ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 սեպտեմբերի 2012 թվականի թիվ 84-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Քաղաքացիական ծառայության մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2012թ. սեպտեմբերի 13-ի <Քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագիրը հաստատելուն և քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերում փոփոխություններ կատարելուն համաձայնություն տալու մասին> N 822 - Ա որոշումը՝

ո ր ո շ ու մ եմ.

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի աշխատակազմի՝

1) Բերդի սոցիալական ծառայությունների տարածքային գործակալության առաջատար մասնագետի /ծածկագիր՝ 70-4.1-30/ քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագիրը.

2) գլխավոր մասնագետի քաղաքացիական ծառայության պաշտոնի /ծածկագիր՝ 70-3.2-14/ անձնագրի 5-րդ կետի երկրորդ պարբերության < առաջատար մասնագետի> բառերի փոխարեն շարադրել՝ <առաջատար մասնագետներից մեկի>.

3) առաջատար մասնագետների քաղաքացիական ծառայության պաշտոնների /ծածկագրեր՝ 70-4.1-16, 70-4.1-17/ անձնագրերի 5-րդ կետի երկրորդ պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ.

<Գործակալության առաջատար մասնագետը Գործակալության մյուս առաջատար մասնագետներից մեկի, Գործակալության առաջին կարգի մասնագետի բացակայության դեպքում փոխարինում է նրան:>:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

2012թ. սեպտեմբերի 24
ք.Իջևան